Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում

▯B ▼C1

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ Բրազիլիայում աճող որոշ ցիտրուսային մրգերի համար ժամանակավոր արտակարգ միջոցների վերաբերյալ 2004 թվականի ապրիլի 29-ի ՈՐՈՇՈՒՄԸ

(ծանուցված՝ թիվ C(2004) 1584 փաստաթղթի համաձայն)

(2004/416/ԵՀ)

▼B

(ՊՏ L 151, 30.04.2004թ., էջ 76)

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		Թիվ	էջ	ամսաթիվ
▯M1	2007 թվականի մայիսի 16–ի Հանձնաժողովի որոշում	L 130	46	22.05 2007թ.

Ուղղված՝

▯C1 Ուղղում՝ ՊՏ L 208, 10.06.2004թ., էջ 68 (416/04)

▼B

▼C1

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝ Բրազիլիայում աճող որոշ ցիտրուսային մրգերի համար ժամանակավոր արտակարգ միջոցների վերաբերյալ 2004 թվականի ապրիլի 29-ի ՈՐՈՇՈՒՄԸ

(ծանուցված՝ C(2004) 1584 փաստաթղթի համաձայն)

(2004/416/ԵՀ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Բույսերի կամ բուսական արտադրանքի համար վնասակար օրգանիզմներ Համայնք ներմուծելու եւ Համայնքում դրանց տարածման դեմ պաշտպանիչ միջոցների մասին» Խորհրդի 2000 թվականի մայիսի 8-ի 2000/29/ԵՀ հրահանգը[1] եւ, մասնավորապես, դրա 16(3) հոդվածը,

Քանի որ

1) Իսպանիան մյուս անդամ պետություններին եւ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ 2003 թվականին կատարված բույսերի առողջության ստուգումներում հայտնաբերվել են վնասակար օրգանիզմներով Արգենտինայից կամ Բրազիլիայում աճող ցիտրուսային մրգերի բազմաթիվ վարակներ եւ, մասնավորապես, Գուիգնառդիա ցիտրիկարպան (Guignardia citricarpa Kiely) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) եւ Քսանտոմոնաս կամպեստրիսը (Xanthomonas campestris) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները): Ավելին, 2003 թվականին Նիդեռլանդները եւ Միացյալ Թագավորությունը նաեւ հաղորդել են Գիգնարդիա ցիտրիկարպա Կիելիով (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) Բրազիլիայում աճող ցիտրուսային մրգերի վարակների մասին,

2) 2003 թվականի նոյեմբերի 12-ից Իսպանիան պաշտոնապես արտակարգ միջոցներ է ձեռնարկել՝ Արգենտինայում կամ Բրազիլիայում աճող ցիտրուսային մրգերի

[1] ՊՏ L 169, 10.07.2000թ., էջ1:Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի 2004/31/ԵՀ հրահանգով (ՊՏ L 85, 23.03.2004թ., էջ 18):

ներմուծումն իր տարածք արգելելու համար,

3) 2000/29/ԵՀ հրահանգով պահանջվում է, որ Համայնքին տվյալ վնասակար օրգանիզմների ներմուծումից պաշտպանելու համար երրորդ երկրներում աճող ցիտրուսային մրգերը պետք է համապատասխանեն տեխնիկական պահանջներին, մասնավորապես՝ այդ հրահանգի չորրորդ հավելվածի Ա մասի առաջին բաժնի 16.2 եւ 16.4 կետերում սահմանված պահանջներին: Իսպանիայից, Նիդեռլանդներից եւ Միացյալ Թագավորությունից ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ Արգենտինայից եւ Բրազիլիայից ներմուծված ցիտրուսային մրգերը չեն համապատասխանում պահանջներին,

4) հետեւաբար, պետք է ձեռնարկվեն Արգենտինայից կամ Բրազիլիայից Համայնք ներմուծվող ցիտրուսային մրգերի նկատմամբ կիրառվող ժամանակավոր արտակարգ միջոցներ,

5) եթե պարզվում է, որ այդ արտակարգ միջոցները բավարար չեն՝ կանխելու տվյալ վնասակար օրգանիզմների ներթափանցումը, կամ այդ միջոցները չեն համապատասխանեցվել, ապա պետք է նախատեսել առավել խիստ կամ այլընտրանքային միջոցներ,

6) արտակարգ միջոցների ազդեցությունը պետք է շարունակաբար գնահատվի մինչեւ 2004 թվականի նոյեմբերի 30-ը, մասնավորապես՝ անդամ պետությունների կողմից տրամադրվելիք տեղեկությունների հիման վրա: Այդ գնահատման արդյունքների հիման վրա պետք է կիրառվեն հետագա հնարավոր միջոցները,

7) սույն Որոշմամբ նախատեսված միջոցները համապատասխանում են Բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՈՐՈՇՈՒՄԸ.

Հոդված 1

Շեղում կատարելով թիվ 2000/29/ԵՀ հրահանգի չորրորդ հավելվածի Ա մասի առաջին բաժնի 16.2 եւ 16.4 կետերից, 2004 թվականի մայիսից, Բրազիլիայում աճող Ցիտրուսը, Ֆորտունելա Սվինգլը, Պոնցիրուսը եւ իրենց հիբրիդները (այսուհետ՝ ցիտրուսային մրգեր) ▯M1 ———————▯ միայն կարող են ներմուծվել Համայնք, եթե դրանք համապատասխանում են սույն Որոշման հավելվածում սահմանված պահանջներին:

▼M1

Հոդված 2

Չսահմանափակելով Հանձնաժողովի՝ 94/3/ԵՀ հրահանգի դրույթների գործողությունը՝[2], Բրազիլիայից ծագող ցիտրուսային մրգեր ներմուծող յուրաքանչյուր անդամ պետություն պետք է Հանձնաժողովին եւ մյուս անդամ պետություններին ոչ ուշ, քան 2007 թվականի դեկտեմբերի 31-ը, տրամադրի 2007 թվականի մայիսի 1-ից մինչեւ նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում այդ մրգերի համար 2000/29/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածի առաջին մասի համաձայն կատարված՝ բույսերի առողջության ստուգումների արդյունքների վերաբերյալ տեխնիկական զեկույցը:

▼C1

Հոդված 3

2007 թվականի մայիսի 1-ից նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ▯M1 ▯, Հանձնաժողովը շարունակաբար հետեւում է իրավիճակի զարգացմանը: Եթե պարզվում է, որ այդ արտակարգ միջոցները բավարար չեն՝ կանխարգելելու Գուիգնառդիա ցիտրիկարպայի (Guignardia citricarpa Kiely) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) կամ Քսանտոմոնաս կամպեստրիսի (Xanthomonas campestris) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) մուտքը, կամ դրանք չեն համապատասխանեցվել, ապա

[2] ՊS L 32, 05.02.1994թ., էջ 37:

Հանձնաժողովը ձեռնարկում է ավելի խիստ կամ այլընտրանքային միջոցներ, 2000/29/ԵՀ հրահանգի 16-րդ հոդվածի երրորդ մասում սահմանված ընթացակարգով:

▼M2 ————————

▼C1

Հոդված 5

Սույն Որոշումը վերանայվում է 2008 թվականի հունվարի 31-ից ոչ ուշ:▌M1 ▌

Հոդված 6

Սույն Որոշումը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Չսահմանափակելով 2000/29/ԵՀ հրահանգի չորրորդ հավելվածի Ա մասի առաջին բաժնի 16.1, 16.3 եւ 16.5 կետերում մրգերի նկատմամբ կիրառելի դրույթների գործողությունը՝ կիրառվում են հետեւյալ պահանջները.

1. Բրազիլիայում աճող ցիտրուսային մրգերի հետ կցվում է M1 ———— 2000/29/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածի առաջին պարբերության մեջ նշված հավաստագիրը, որի մեջ պաշտոնապես նշվում է.

ա) մրգերն աճում են Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) զերծ ճանաչված տարածքում՝ 2000/29/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն, եւ հավաստագրում նշված տարածքում.

կամ

բ)

--- համաձայն վերահսկման եւ զննման պաշտոնական ռեժիմի՝ բուսականության վերջին շրջանի սկզբից արտադրության վայրում Քսանտոմոնաս կամպեստրիսի (Xanthomonas campestris) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) ախտանիշներ չեն դիտարկվել.

— եւ

— համաձայն վերահսկման ու զննման պաշտոնական ռեժիմի՝ ներառյալ տեստավորման համապատասխան ռեժիմը, արտադրության վայրում հավաքված մրգերը զերծ են Քսանտոմոնաս կամպեստրիսից (Xanthomonas campestris) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները).

— եւ

— մրգերը ենթարկվել են նատրիում օրթոֆենիլֆենատի (sodium orthophenylphenate) նման մշակման ու նշվել են հավաստագրում.

— եւ

— այս նպատակով պաշտոնապես գրանցված են արտադրության վայրը, փաթեթավորման սարքերը, արտահանողները եւ մրգերի հանձնման մեջ ներգրավված որեւէ այլ օպերատոր:

2. Բրազիլիայից՝ M1 ———— բացի Ցիտրուս աուրանտիում L.-ից (Citrus aurantium L.), այլ ցիտրուսային մրգերի հետ կցվում է 2000/29/ԵՀ հրահանգի 13-րդ հոդվածի առաջին պարբերության մեջ նշված հավաստագիրը, որի մեջ պաշտոնապես նշված է՝

ա) մրգերը աճում են Գուիգնառդիա ցիտրիկարպայից (Guignardia citricarpa Kiely) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) զերծ ճանաչված, 2000/29/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածի երկրորդ մասում նշված ընթացակարգի համաձայն եւ հավաստագրում նշված տարածքից.

կամ

բ)

բուսականության վերջին շրջանի սկզբից արտադրության վայրում Գուիգնառդիա ցիտրիկարպայի (Guignardia citricarpa Kiely) (Ցիտրուսի համար բոլոր ախտածին շտամները) ախտանիշներ չեն դիտարկվել եւ, համաձայն պաշտոնական զննման, արտադրության վայրում հավաքված մրգերից որեւէ մեկի մեջ այս օրգանիզմի ախտանիշներ չեն հայտնաբերվել:

— եւ

— այս նպատակով պաշտոնապես գրանցված են արտադրության վայրը, փաթեթավորման սարքերը, արտահանողները եւ մրգերի հանձնման մեջ ներգրավված որեւէ այլ օպերատոր:

3. Սույն Որոշմամբ կարգավորվող մրգերը կարող են մուտք գործել Համայնք, եթե դրանց շարժն արտադրության վայրից դեպի Համայնք արտահանվող կետին կից ներկայացվում են Բրազիլիայի Բույսերի պաշտպանության ազգային կազմակերպության իրավասությամբ տրամադրված եւ վերահսկված փաստաթղթերը M1 ՝ որպես Հանձնաժողովին տեղեկատվությունը հասանելի դարձնող փաստաթղթային համակարգի մաս: